ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26

03 փետրվարի 2020 թվական

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի բնակիչ Ժենիկ Ալեքսանի Դավթյանի դիմումը՝ որդու հուղարկավորության ծախսը հոգալու համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 9 որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետը՝ *որոշում եմ*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2020 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4726 (հուղարկավորության նպաստներ բյուջեից) հոդվածից 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի բնակիչ Ժենիկ Ալեքսանի Դավթյանին (անձնագրի N AN0315147 տրված 022-ի կողմից) :

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 03
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 27

10 փետրվարի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐ ԻՍԱՀԱԿՅԱՆ/ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 11-ի թիվ 46 որոշումը *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի վարչական շենքում 2020 թվականի ժամը 14:00-ին կազմակերպել Անի համայնքի սեփականությունը հանդիսացող /Իսահակյան բնակավայր/ հողամասերի վարձակալության մրցույթ՝ համաձայն հավելվածի:
2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն <<Հայաստանի Հանրապետության>> օրաթերթում և զանգվածային լրատվության այլ միջոցներում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 10
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 27 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ

Շիրակի մարզի Անիի համայնքապետարանը հայտարարում է , որ սույն թվականի մարտի 12-ին ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի վարչական շենքում տեղի կունենա Անի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության նպատակով մրցույթ՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով՝ հետևյալ լոտերով և ծածկագրերով՝

1,25480 հա-4-րդ կարգի, անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0122-0044/
0.92517 հա- 4-րդ կարգի, անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0122-0061/
1.47915 հա- 4-րդ կարգի, անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0122-0044/
1.57438 հա-4-րդ կարգի, անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0122-0060/
1.58123 հա-4-րդ կարգի, անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0122-0060/
1.72485-5-րդ կարգի, անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0109-0048/
1.00131 հա-3-րդ կարգի, անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0017-0090/
1.5566 հա -3-րդ կարգի անջրդի, վարելահող/ծածկագիր 08-043-0114-0105/
0.92745 հա -3-րդ կարգի, անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0114-0110/
0.6345 հա -3-րդ կարգի անջրդի վարելահող/ծածկագիր 08-043-0111-0045/
Մեկ հեկտարի համար մեկնարկային գին սահմանել 4500/չորս հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 28

10 փետրվարի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 89, թիվ 90, թիվ 91 և թիվ 92 որոշումները. *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառք՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:
2. Աճուրդի անցկացման մասին տալ հայտարարություն <<Հայաստանի Հանրապետության>> օրաթերթում և զանգվածային լրատվության այլ միջոցներում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 10

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10–Ի N 28 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ

Շիրակի մարզի Անիի համայնքապետարանը հայտարարում է աճուրդ-վաճառք, որը տեղի կունենա 2020 թվականի մարտի 13-ին ժամը 14:00 –ին Անիի համայնքապետարանում:

Լոտ 1. Շիրակի մարզ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Նոր թաղամաս 7-րդ փողոց թիվ 19/1 հասցեում գտնվող 0,04 հեկտար հողատարածք, բնակելի կառուցապատման գոտի (ծածկագիր 08-003-0017-0031) բնակելի տուն կառուցելու նպատակով:

Հողատարածքի մեկնարկային գին է սահմանվել 147840 (մեկ հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ: Նախավճարի չափը կազմում է տվյալ հողամասի մեկնարկային գնի 5%-ը, մասնակցության վճար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

Այլ մանրամասների համար դիմել Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10–Ի N 28 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանը հայտարարում է բաց դասական աճուրդ-վաճառք, որը տեղի կունենա 2020թ. մարտի 16-ին ժամը 12:00 –ին Անիի համայնքապետարանում:

Լոտ 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Անի համայնք, գյուղ Բագրավան, փողոց 17, թիվ 3 հասցեում գտնվող 0.02 հա մակերեսով, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության հողամաս (ծածկագիր 08-022-0158-0027)՝ բջջային կապի կայանի շինարարության նպատակով:

Հողամասի մեկնարկային գինը կազմում է 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ: Նախավճարի և քայլի չափը կազմում է լոտի մեկնարկային գնի 5%-ը, մասնակցության վճար 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Լոտ 2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Անի համայնք, գյուղ Զորակապ, փողոց 12, թիվ 25/2 հասցեում գտնվող 0.04 հա մակերեսով, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության հողամաս (ծածկագիր 08-073-0125-0033)՝ բջջային կապի կայանի շինարարության նպատակով:

Հողամասի մեկնարկային գինը կազմում է 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Նախավճարի և քայլի չափը կազմում է լոտի մեկնարկային գնի 5%-ը, մասնակցության վճար 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Լոտ 3. Շիրակի մարզ, Անի համայնք, գյուղ Քարաբերդ, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 4 հասցեում գտնվող 0.03 հա մակերեսով, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության հողամաս (ծածկագիր 08-118-0107-0165)՝ բջջային կապի կայանի շինարարության նպատակով:

Հողամասի մեկնարկային գինը կազմում է 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Նախավճարի և քայլի չափը կազմում է լոտի մեկնարկային գնի 5%-ը, մասնակցության վճար 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 29

10 փետրվարի 2020 թվականի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի դրույթներով՝ ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Հակակարկտային կայանների» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Մարտիրոս Դարբինյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ Նարեկ Նիկոյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Արսեն Գասպարյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի օգնական

Լևոն Ղազարյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի օգնական /գյուղատնտեսական հարցերով/:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Շուշանիկ Բոթոյանին:

3. Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի փետրվարի 11-ին, ժամը 12.00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մադաթյան 2 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 10
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 30

10 փետրվարի 2020 թվականի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի դրույթներով՝ ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի արտաքին լուսավորության ցանցի 2020 թվականի ընթացիկ սպասարկման և պահպանման ծառայության» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Մարտիրոս Դարբինյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ Տոնական Գրիգորյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի էլեկտրիկ

Նարեկ Նիկոյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Առաքել Հայրապետյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վարորդ:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Շուշանիկ Բոթոյանին:

3. Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի փետրվարի 11-ին, ժամը 11.00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 10
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 31

10 փետրվարի 2020 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 100-Ն որոշումը՝ *որոշում եմ*

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2020 թվականի բյուջեի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն N 1, 2, 3 հավելվածների:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 10
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ

ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 31 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկամտատեսակներ	հողված	ընդամենը	1-ին եռ	2-րդ եռ	3-րդ եռ	4-րդ եռ
Հողի հարկ	7131	60000.0	8000.0	16000.0	32000.0	60000.0
Գույքահարկ շենքերից ու շինություններից	7131	4000□0	900□0	1800□0	2700□0	4000□0
Գույքահարկ փոխադրամիջոցներից	7136	85231□3	16000□0	30500□0	60000□0	85231□3
Տեղական տուրք	7145	5280□3	1295□1	2590□1	3885□3	5280□3
Պետական տուրք	7146	3000□0	1000□0	1500□0	2400□0	3000□0
Պաշտոնական դրամաշնորհներ	7300	511489□1	127872□3	255744□6	383616□8	511489□1
Հողի վարձակալություն	7415	24100□0	7000□0	12000□0	16000□0	24100□0
Գույքի վարձակալություն	7415	2429□8	800□0	1200□0	2000□0	2429□8
Պատվիրակված լիազորություններ	7421	5396□8	1079□4	2428□5	3777□7	5396□8
Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման այլ վճարներ	7421	500□0			300□0	500□0
Տեղական վճար այդ թվում	7422	22623□5	5189□0	11167□5	16495□0	22623□5
Շինավարտը փաստագրելու համար		50□0				50□0
Հողերը հատկացնելու և հետ վերցնելու հետ կապված փաստաթղթերի նախապատ. համար						
Մրցույթների և աճուրդների մասնակց համար		100□0				100□0
Աղբահանության վճարներ		4000□0	1000□0	2000□0	3000□0	4000□0
Համայնքի ենթ. մանկապարտեզի ծառ-ից օգտ. համար		15304□0	3298□0	7300□0	11302□0	15304□0
Արտադպրոցական		3169□5	891□0	1867□5	2193□0	3169□5

դաստիարակության ծառ-ից օգտվելու համար						
Վարչական իրավախախտումներ	7431					
ընդամենը		7240508	1691358	3349307	5231748	7240508

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար **Ա.Գևորգյան**

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ

ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 31 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Ընդամենը ծախսեր	Ընդամենը	Այդ թվում		Ըստ եռամսյակների			
		Վարչ.	Ֆոնդ	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ. եռ.	4-րդ եռ.
Ընդհանուր բնույթի հանրային ծառ	240028□1	225128□1	14900□0	64120□5	105758□5	152782□1	240028□1
Տնտեսական հարաբերություններ	113503□4	18400□0	95103□4	44100□0	56049□0	78453□4	113503□4
Շրջակա միջավայրի պաշտպանություն	77200□0	76700□0	500□0	19325□0	40700□0	60775□0	77200□0
Բնակարանային շին և կոմունալ ծառ	123300□0	89000□0	34300□0	39300□0	64300□0	98800□0	123300□0
Հանգիստ, մշակույթ և կրոն	74642□0	44442□0	30200□0	16238□0	40096□0	66384□0	74642□0
կրթություն	144592□0	125092□0	19500□0	41567□0	81502□0	115995□0	144592□0
Սոցիալական պաշտպանություն	8400□0	8400□0		2100□0	4139□9	7600□0	8400□0
Հիմնական չդասվող պահուստային ֆոնդեր	2761□5	140761□5		2761□5	2761□5	2761□5	2761□5
ընդամենը	784427□0	727923□6	194503□4	229512□0	395306□9	583551□0	784427□0

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար **Ա. Գևորգյան**

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ

ՓԵՏՐՎԱՐԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 31 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

ետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.
1	2	6	7	8	9
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200-տող2300+տող2400+տող2500+տող2600+տող2700 +տող2800+տող2900+տող3000+տող3100)		229512.0	395306.9	583551.0	784427.0
աշխատողների աշխատավարձեր և հավել.	4111	70975.5	135578.5	203767.1	304814.0
Պարգևատրումներ, դրամականխրախուսումներ	4112	500.0	4800.0	8750.0	9750.0
էներգետիկ ծառայություններ	4212	9330.0	18210.0	30475.0	43000.0
կոմունալ ծառայություններ	4213	1140.0	5315.0	8485,0	10390.0
կապի ծառայություններ	4214	579.0	1148.0	1728.0	2304.0
ապահովագրական ծախսեր	4215	450.0	450.0	450.0	450.0
ներքին գործուղումներ	4221	400.0	850.0	1850.0	2586
համակարգչային ծառայություններ	4232	500.0	1000.0	1500.0	2000.0
տեղեկատվական ծառայություններ	4234	380.0	530.0	630.0	780.0
Փաստաբանականծառայություններ	4235	1000.0	1000.0	2000.0	2000.0
ընդհ. բնույթի այլ ծառայություններ	4239	2300.0	5500.0	7450.0	9750.0
մասնագիտական ծառայություններ	4241	1120.0	2230.0	3350.0	4350.0
շենքերի և կառույցների ընթ. նորոգում և պահպ.	4251	2000.0	19300.0	37500.0	49000.0
մեք. և սարք. ընթացիկ նորոգ. և պահպ.	4252	250.0	600.0	1000.0	2050.0
գրասենյակային նյութեր և հագուստ	4261	585.0	1315.0	1975.0	2640.0
տրանսպորտային նյութեր	4264	4500.0	7300.0	9800.0	12800.0
կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	100.0	250.0	350.0	500.0
հատուկ նպատակային այլ նյութեր	4269	2720.0	11620.0	16350.0	20648.1
Սուբսիդիաներհամ.կազմ	4511	19621.0	39560.0	59526.0	80000.0
Ընթացիկ դրամաշնորհներ պետ. և համայնք. Ոչ առևտրային կազմ	4637			600.0	2000.0
Այլընթացիկդրամաշնորհներ	4639			500.0	500.0
Այլկապիտալդրամաշնորհներ	4657	1000.0	4700.0	9200.0	13200.0
Հուղարկավորության նպաստ	4726	300.0	600.0	800.0	1000.0
Կրթ.մշակ և սպորտ. նպ.բյուջե	4727	300.0	600.0	800.0	1000.0
այլ նպաստներ բյուջեից	4729	1500.0	2939.9	6000.0	6400.0
նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	100.0	100.0	500.0	2000.0
Այլհարկեր	4822	100.0	200.0	300.0	300.0
պարտադիր վճարներ	4823	500.0	500.0	650.0	950.0
Պահուստայինմիջոցներ	4891	2761.5	2761.5	2761.5	2761.5

Շենքերի և շին. ձեռք բերում	5111	1000.0	1000.0	1000.0	1000.0
շենքերի և շինությունների կառուցում	5112	34000.0	34849.0	67003.4	87003.4
շենք. և շինությունների կապիտալ վերանորոգ.	5113	13000.0	34000.0	40000.0	50000.0
Տրանսպորտայինսարքավորումներ	5121	5000.0	5000.0	5000.0	5000.0
վարչական սարքավորումներ	5122	10500.0	10500.0	10500.0	10500.0
այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	30000.0	30000.0	30000.0	30000.0
Ոչ հիմնական նյութական ակտիվներ	5132	1000.0	1000.0	1000.0	1000.0
Նախագծ.հետազոտ.ծախսեր	5134	10000.0	10000.0	10000.0	10000.0
Կրթական, մշակութ և սպորտային նպաստներ					
Հողհատարումիցմուտքեր					

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար **Ա. Գևորգյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 32

10 փետրվարի 2020 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով *որոշում եմ*

1.Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 01, դաս 01 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<25500,0>> թիվը փոխարինել <<24500,0>> թվով:

2.Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 03, դաս 01 (շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1000,0>> թվով:

3.Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 (ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածի <<2500,0>> թիվը փոխարինել <<1500,0>> թվով, 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1000,0>> թվով:

4.Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01(ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի առաջին և երկրորդ եռամսյակների <<1500,0>> և <<3000,0>> թվերը համապատասխանաբար փոխարինել <<3500,0>> և <<4000,0>> թվերով, 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի առաջին և երկրորդ եռամսյակների <<37041,1>> և <<65000,0>> թվերը համապատասխանաբար փոխարինել <<35041,1>> և <<64000,0>> թվերով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար — Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 10
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 33

11 փետրվարի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ընտրական օրենսգրքի>> 18-րդ հոդվածի 1-ին մասի և <<Հանրաքվեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 2020 թվականի ապրիլի 5-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում ընտրական տեղամասային կենտրոնները սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի թիվ 1-ին միջնակարգ դպրոց, հասցե՝ քաղաք Մարալիկ, Հրանտ Շահինյան փողոց 6-րդ նրբանցք 5 շենք (պատասխանատու՝ Շուշանիկ Հովհաննիսյան հեռ.077-92-93-30):

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արտադպրոցական կենտրոնի շենք, հասցե՝ քաղաք Մարալիկ, Հաղթանակի փողոց շենք 3, (պատասխանատու՝ Սամվել Սարոյան հեռ.093-36-40-61):

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի մշակութային երիտասարդական կենտրոնի շենքը, հասցե՝ քաղաք Մարալիկ, Հրանտ Շահինյան փողոց, շենք 94 (պատասխանատու՝ Վալերիկ Սահակյան հեռ.093-50-75-79):

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի <<Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Սառնաղբյուր 5-րդ փողոց, թիվ 6 (պատասխանատու՝ Հմայակ Հակոբյան հեռ.093-85-00-51):

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի <<Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական

հաստատություն>> հասցեն՝ բնակավայր Սառնաղբյուր 1-ին փողոց, 8-րդ նրբանցք, թիվ 9 (պատասխանատու՝ Եստեր Արշակյան հեռ.094-28-54-37):

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սարակապ բնակավայրի <<Սարակապի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Սարակապ 1-ին փողոց, թիվ 15 շենք (պատասխանատու՝ Միսակ Ծառուկյան հեռ. 093-35-83-93):

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի <<Անդրանիկ Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Լուսաղբյուր 4րդ փողոց, թիվ 17 շենք (պատասխանատու՝ Արտուշ Միքայելյան հեռ.093-73-60-10):

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Զորակապ բնակավայրի <<Զորակապի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Զորակապ 2-րդ փողոց, թիվ 1 շենք (պատասխանատու՝ Կարինե Սահակյան հեռ.098-54-98-50):

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի <<Հանդիսությունների սրահ>> հասցեն՝ բնակավայր Անիավան 8-րդ փողոց, թիվ 11 շենք (պատասխանատու՝ Մարտիրոս Միրոյան հեռ.093-40-18-76):

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի <<Շիրակավանի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Շիրակավան 4-րդ փողոց, թիվ 31 շենք (պատասխանատու՝ Նաթելա Համբարյան հեռ. 094-93-21-26):

11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի <<Իսահակյանի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Իսահակյան 5-րդ փողոց, թիվ 6 շենք (պատասխանատու՝ Գնել Հարությունյան հեռ.093-41-01-29):

12) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայր <<Գուսանագյուղի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Գուսանագյուղ 1-ին փողոց, թիվ 8 շենք (պատասխանատու՝ Սեդա Ղազարյան հեռ.095-02-90-96):

13) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի <<Ձիթհանքովի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Ձիթհանքով 3-րդ փողոց, թիվ 26/1 շենք (պատասխանատու՝ Կարինե Բալաբեկյան հեռ.094-82-13-76):

14) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի <<Բագրավանի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Բագրավան 6-րդ փողոց, թիվ 8 շենք (պատասխանատու՝ Հերսիկ Հարությունյան հեռ.094-15-83-83):

15) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի <<Անիպեմզայի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Անիպեմզա 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6 շենք (պատասխանատու՝ Հասմիկ Նազարյան հեռ.093-80-52-09):

16) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրի <<Ջրափիի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Ջրափի 7-րդ փողոց, թիվ 19 շենք (պատասխանատու՝ Մարիամ Հովհաննիսյան հեռ.094-34-35-39):

17) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր բնակավայրի <<Հայկաձորի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Հայկաձոր 4-րդ փողոց, թիվ 1 շենք (պատասխանատու՝ Վարդան Սարգսյան հեռ. 093-03-07-72):

18) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Աղին բնակավայրի <<Աղինի մշակույթի տուն>> հասցեն՝ բնակավայր Աղին 5-րդ փողոց, թիվ 27 շենք (պատասխանատու՝ Արմենակ Համբարձումյան հեռ. 093-58-50-18):

19) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրի <<Քարաբերդի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Քարաբերդ 1-ին փողոց, թիվ 13 շենք (պատասխանատու՝ Ալեքսան Ասատրյան հեռ. 093-82-09-12):

20) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> հասցեն՝ բնակավայր Լանջիկ 1-ին փողոց, թիվ 12 շենք (պատասխանատու՝ Ծովիկ Հովհաննիսյան հեռ. 094-74-90-23):

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 11

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 34

12 փետրվարի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանը *որոշում եմ՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 12

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
12–Ի N 34 ՈՐՈՇՄԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրինակելի աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) անցկացնող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգը:

2. Հանձնաժողովը ղեկավարվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն օրինակելի աշխատակարգով և դրա հիման վրա՝ համապատասխան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հանձնաժողովի աշխատակարգով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը մրցույթի արդյունքների գրավոր բողոքի քննարկման և ընդունված որոշման հիման վրա կարող է սույն աշխատակարգի 5-րդ և11-րդ կետերով նախատեսված մարմիններին և հաստատություններին միջնորդել իրենց կողմից առաջադրված հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակներից հանել և համապատասխան միջոցներ ձեռնարկել այն թեկնածուի նկատմամբ, որը լինելով հանձնաժողովի անդամ դրսևորել է սուբյեկտիվ մոտեցում, ինչպես նաև ընդգրկված լինելով հանձնաժողովի կազմում առանց նախապես տեղեկացնելու անհարգելի պատճառով չի մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

4. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնում է համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձը (այսուհետ՝ լիազորված անձ), որը մրցույթի մասնակիցներին (այսուհետ՝ մասնակիցներ) բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրում և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրում է նիստերի արձանագրությունները: Լիազորված անձը հանձնաժողովի անդամ չի համարվում:

5. Հանձնաժողովի կազմը ընտրվում է այդ նպատակով համակարգչում գետեղված և պատահական ընտրված 6 թեկնածուներից՝ յուրաքանչյուր մրցույթ անցկացնելուց ոչ շուտ, քան 24 ժամ առաջ՝ հետևյալ հարաբերակցությամբ՝

1) 15000-ից ավելի բնակչություն ունեցող այլ համայնքի աշխատակազմի համայնքապետարանի հանձնաժողովում.

ա. երկուսը՝ համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ.

բ. երկուսը՝ համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ (համայնքի ղեկավար, տեղական, խորհրդական, աշխատակազմի համայնքային ծառայողներ).

գ. մեկը՝ համայնքի ավագանու անդամ.

դ. մեկը՝ գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչ:

6. Համապատասխան համայնքապետարանի աշխատակազմը, մրցույթն սկսելուց առնվազն 6 ժամ առաջ, ընտրված թեկնածուներին տեղեկացնում է հանձնաժողովի անդամ ընտրվելու, մրցույթի անցկացնելու օրվա, ժամի և վայրի մասին:

Համակարգչի միջոցով ընտրված թեկնածուին (թեկնածուներին) հանձնաժողովի կազմում ընդգրկելու անհնարինության դեպքում (ժամանակավոր անաշխատունակության, բացակայության և այլ պատճառներով) համակարգչի միջոցով ընտրվում է այլ թեկնածու՝ պահպանելով 5 կետում նշված հարաբերակցությունը:

7. Հանձնաժողովի կազմը հաստատվում է համայնքի ղեկավարի որոշմամբ: Համայնքի ղեկավարի որոշմամբ նշանակվում է լիազորված անձը:

8. Մրցույթից առաջ գումարված աշխատակարգային նիստում հանձնաժողովի անդամների քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, հանձնաժողովի անդամներից մեկը ընտրվում է հանձնաժողովի նախագահ:

9. Մրցույթի ընթացքում հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին անհնարին դառնալու դեպքում, հանձնաժողովի կազմը չի համալրվում:

10. Մրցույթի ընթացքում հանձնաժողովի նախագահի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին անհնարին դառնալու դեպքում, հանձնաժողովի մյուս անդամների քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, հանձնաժողովի անդամներից մեկը ընտրվում է հանձնաժողովի նախագահ:

11. Համակարգչում գետեղելու համար հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակները.

1) 15000-ից ավելի բնակչություն ունեցող մյուս համայնքների ղեկավարներին առաջադրվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարանից, համապատասխան համայնքապետարանից, գիտական և ուսումնական հաստատություններից, ընդ որում՝ համապատասխան համայնքապետարանը աշխատակազմի

ներկայացուցիչներից բացի առաջադրում է նաև համայնքի ավագանու բոլոր անդամների թեկնածությունները:

12. Հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակներում առնվազն պետք է ընդգրկվեն հետևյալ տվյալները.

1) յուրաքանչյուր թեկնածուի անունը, ազգանունը (հայրանունը), պաշտոնը, դասային աստիճանը (առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարները՝ բնակարանային, աշխատանքային, բջջային, էլեկտրոնային փոստի հասցեն, ֆաքսը (դրանց առկայության դեպքում) և այլն,

2) համայնքային ծառայության այն պաշտոնը (պաշտոնները), որի թափուր լինելու դեպքում անցկացվող մրցույթին կոնկրետ թեկնածուն, որպես հանձնաժողովի անդամ, կարող է մասնակցել:

13. Մինչև հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակները համայնքի ղեկավարին ներկայացնելը, ցուցակներում ընդգրկված անձինք, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարանի, համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի, գիտական և ուսումնական հաստատությունների միջոցով գրավոր տեղեկացվում են հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակում ընդգրկված լինելու մասին:

14. Հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակները համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո, համապատասխան համայնքապետարանի աշխատակազմը ցուցակները տարանջատում է ըստ բնագավառների և մասնագիտությունների ու համապատասխան կոդավորմամբ զետեղում է համակարգչում:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Հանձնաժողովի խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ) համար համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու հավասար մատչելիության ապահովումը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից.

բ) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը:

16. Հանձնաժողովը՝

ա) աշխատակազմից ստանում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը,

մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների փաստաթղթերը, թեստավորման անցկացման համար անհրաժեշտ ամփոփաթերթերը և տվյալ թափուր պաշտոնի անձնագրի օրինակը.

բ) քննության է առնում փաստաթղթերի ճշտությունը, ամբողջականությունը և ընդունում որոշում դիմած անձանց մրցույթին մասնակցելու թույլտվության մասին.

գ) մինչև թեստավորումն սկսելն ստուգում է ամփոփաթերթերը.

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած կարգով կազմում է թեստեր՝ թեստավորման փուլն անցկացնելու համար.

ե) անցկացնում է մասնակիցների թեստավորում.

զ) ստուգում և գնահատում է մասնակիցների թեստավորման առաջադրանքները.

է) ամփոփում և հրապարակում է թեստավորման արդյունքները.

ը) քննարկում է մասնակիցների բողոքները՝ կապված թեստավորման արդյունքների հետ.

թ) հրապարակում է մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակը.

ժ) ընդունում է որոշում հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին.

ժա) մասնակիցների հետ անցկացնում է հարցազրույց.

ժբ) կազմում է մասնակիցների գործնական կարողությունների գնահատման թերթեր.

ժգ) հարցազրույցից անմիջապես հետո գնահատում է յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները և հաշվարկում յուրաքանչյուր մասնակցի ստացած դրական բալերի հանրագումարը.

ժդ) ամփոփում է մրցույթի արդյունքները.

ժե) քննարկում է առաջացած հարցերը.

ժզ) հրապարակում է մրցույթի արդյունքները.

ժէ) մրցույթի արդյունքների հրապարակումից հետո նույն օրը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմին է ներկայացնում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացություն.

ժը) աշխատակազմին է հանձնում թեստավորում անցկացնելու համար ստացված, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը և մրցութային փաթեթը.

ի) իրականացնում է օրենքով, սույն աշխատակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից հաստատված իր աշխատակարգով և թեստավորման արդյունքների հետ կապված իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

17. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

18. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

19. Հանձնաժողովի որոշումն ընդունվում է, եթե դրա ընդունման օգտին քվեարկել է նիստին մասնակցած անդամների կեսից ավելին:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

20. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

բ) վարում է հանձնաժողովի նիստերը.

գ) կազմակերպում է թեստերի կազմման աշխատանքները՝ սահմանված կարգի համաձայն.

դ) մինչև թեստավորումն սկսելը՝ հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում և ստորագրում է ամփոփաթերթերը, ինչպես նաև ստուգում և իր ստորագրությամբ վավերացրած թերթը փակցնում է քվեարկության համար նախատեսված արկղի վրա.

ե) հարցազրույցի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը.

զ) որոշում է մրցույթի հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ.

է) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

21. Հանձնաժողովի անդամը՝

ա) ստորագրում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը.

բ) թեստավորման աշխատանքների նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

գ) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և կարող է հարցեր տալ մասնակիցներին՝ բարձրաձայն հայտարարելով պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ տալով ճիշտ պատասխանը.

դ) հարցազրույցի արդյունքում գնահատում է յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները՝ մասնակիցների գործնական կարողությունների գնահատման թերթերում.

ե) մասնակցում է յուրաքանչյուր մասնակցի ստացած դրական բալերի հանրագումարի հաշվարկմանը.

զ) ստորագրում է մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացությունը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում՝ ստորագրության կողքին գրառում է՝ «հատուկ կարծիքը կցվում է», և հանձնաժողովի նախագահին է հանձնում իր կողմից ստորագրված հատուկ կարծիքը.

է) ծանոթանում է նիստերի արձանագրություններին և ստորագրում դրանք.

ը) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

22. Մրցույթը համարվում է ավարտված՝ հանձնաժողովի կողմից աշխատակազմին մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացություն տալու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին որոշում ընդունելու պահից:

23. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 34
ՈՐՈՇՄԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրինակելի աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց (այսուհետ՝ համայնքային ծառայողներ) ատեստավորման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգը:

2. Հանձնաժողովը ղեկավարվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն օրինակելի աշխատակարգով և դրա հիման վրա՝ համապատասխան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հանձնաժողովի աշխատակարգով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի քննարկման և ընդունված որոշման հիման վրա կարող է սույն աշխատակարգի 5-րդ և 12-րդ կետերով նախատեսված մարմիններին և հաստատություններին միջնորդել իրենց կողմից առաջադրված հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակներից հանել և համապատասխան միջոցներ ձեռնարկել այն թեկնածուի նկատմամբ, որը լինելով հանձնաժողովի անդամ դրսևորել է սուբյեկտիվ մոտեցում, ինչպես նաև ընդգրկված լինելով հանձնաժողովի կազմում առանց նախապես տեղեկացնելու անհարգելի պատճառով չի մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

4. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնում է համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձը (այսուհետ՝ լիազորված անձ), որը ատեստավորվող համայնքային ծառայողներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրում և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրում է նիստերի արձանագրությունները: Լիազորված անձը հանձնաժողովի անդամ չի համարվում:

5. Հանձնաժողովի կազմը ընտրվում է այդ նպատակով համակարգչում գետեղված և պատահական ընտրված 6 թեկնածուներից՝ յուրաքանչյուր ատեստավորում անցկացնելուց ոչ շուտ, քան 24 ժամ առաջ՝ հետևյալ հարաբերակցությամբ՝

ա. երկուսը՝ համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ.

բ. երկուսը՝ համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ (համայնքի ղեկավար, տեղական, խորհրդական, աշխատակազմի համայնքային ծառայողներ).

գ. մեկը՝ համայնքի ավագանու անդամ.

դ. մեկը՝ գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչ:

6. Համապատասխան համայնքապետարանի աշխատակազմը, ատեստավորումն սկսելուց առնվազն 6 ժամ առաջ, ընտրված թեկնածուներին տեղեկացնում է հանձնաժողովի անդամ ընտրվելու, ատեստավորում անցկացնելու օրվա, ժամի և վայրի մասին:

7. Համակարգչի միջոցով ընտրված թեկնածուին (թեկնածուներին) հանձնաժողովի կազմում ընդգրկելու անհնարինության դեպքում (ժամանակավոր անաշխատունակության, բացակայության և այլ պատճառներով) համակարգչի միջոցով ընտրվում է այլ թեկնածու՝ պահպանելով 5 կետում նշված հարաբերակցությունը:

8. Հանձնաժողովի կազմը հաստատվում է համայնքի ղեկավարի որոշմամբ: Համայնքի ղեկավարի որոշմամբ նշանակվում է լիազորված անձը:

9. Ատեստավորումից առաջ գումարված աշխատակարգային նիստում հանձնաժողովի անդամների քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, հանձնաժողովի անդամներից մեկը ընտրվում է հանձնաժողովի նախագահ:

10. Ատեստավորման ընթացքում հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին անհնարին դառնալու դեպքում, հանձնաժողովի կազմը չի համալրվում:

11. Ատեստավորման ընթացքում հանձնաժողովի նախագահի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին անհնարին դառնալու դեպքում, հանձնաժողովի մյուս անդամների քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, հանձնաժողովի անդամներից մեկը ընտրվում է հանձնաժողովի նախագահ:

12. Համակարգչում գետեղելու համար հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակները.

1) 15000-ից ավելի բնակչություն ունեցող մյուս համայնքների ղեկավարներին առաջադրվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարանից, համապատասխան համայնքապետարանից, գիտական և ուսումնական հաստատություններից, ընդ որում՝ համապատասխան համայնքապետարանը աշխատակազմի ներկայացուցիչներից բացի առաջադրում է նաև համայնքի ավագանու բոլոր անդամների թեկնածությունները:

13. Հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակներում առնվազն պետք է ընդգրկվեն հետևյալ տվյալները.

1) յուրաքանչյուր թեկնածուի անունը, ազգանունը (հայրանունը), պաշտոնը, դասային աստիճանը (առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարները՝ բնակարանային, աշխատանքային, բջջային, էլեկտրոնային փոստի հասցեն, ֆաքսը (դրանց առկայության դեպքում) և այլն,

2) համայնքային ծառայության այն պաշտոնը (պաշտոնները), որը զբաղեցնող համայնքային ծառայողի ատեստավորմանը կոնկրետ թեկնածուն, որպես հանձնաժողովի անդամ, կարող է մասնակցել:

14. Մինչև հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակները համայնքի ղեկավարին ներկայացնելը, ցուցակներում ընդգրկված անձինք, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարանի, համապատասխան համայնքապետարանի (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի, գիտական և ուսումնական հաստատությունների միջոցով գրավոր տեղեկացվում են հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակում ընդգրկված լինելու մասին:

15. Հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակները համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո, համապատասխան համայնքապետարանի աշխատակազմը ցուցակները տարանջատում է ըստ բնագավառների և մասնագիտությունների ու համապատասխան կողավորմամբ զետեղում է համակարգչում:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Հանձնաժողովի խնդիրը ատեստավորման միջոցով՝ որոշումն է իր զբաղեցրած պաշտոնին համայնքային ծառայողի համապատասխանության, ինչպես նաև ավելի բարձր դասային աստիճանի շնորհման նպատակահարմարության:

17. Հանձնաժողովը՝

ա) աշխատակազմից ստանում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը, ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցանկը և այդ համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի օրինակները, ծառայողական բնութագրերը և դրանց վերաբերյալ առկա առարկությունները.

բ) իրականացնում է քննարկումներ առանձին հարցերի շուրջ.

գ) մինչև թեստավորումն սկսելն ստուգում է ամփոփաթերթերը.

դ) անցկացնում է փաստաթղթային ատեստավորում.

ե) սահմանված կարգով կազմում է թեստերը՝ թեստավորման փուլն անցկացնելու համար.

զ) անցկացնում է համայնքային ծառայողների թեստավորում.

է) ստուգում և գնահատում է համայնքային ծառայողների թեստավորման առաջադրանքները.

ը) հաստատում և հրապարակում է թեստավորման արդյունքները.

թ) քննարկում է թեստավորման արդյունքների հետ կապված համայնքային ծառայողների բողոքները.

ժ) հրապարակում է ատեստավորման հաջորդ՝ հարցազրույցի փուլ անցած հանայնքային ծառայողների ցուցակը.

ժա) ընդունում է որոշում է հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին.

ժբ) համայնքային ծառայողի հետ անցկացնում է հարցազրույց.

ժգ) կազմում է ատեստավորվողների գործնական կարողությունների գնահատման թերթեր.

ժդ) կազմում է քվեաթերթեր.

ժե) հարցազրույցից անմիջապես հետո անցկացնում է քվեարկություն.

ժզ) քվեարկության արդյունքում յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ ընդունում է որոշում.

ժէ) ամփոփում է ատեստավորման արդյունքները.

ժը) յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ կազմում է ատեստավորման թերթ.

ի) աշխատակազմին է հանձնում թեստավորում անցկացնելու համար ստացված, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը և ատեստավորման փաստաթղթերի փաթեթը.

իա) իրականացնում է օրենքով, սույն օրինակելի աշխատակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից հաստատված՝ իր աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

19. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

20. Ընդունված է համարվում Հանձնաժողովի այն որոշումը, որն ստացել է Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայները: Թեստավորման և հարցազրույցի միջոցով ատեստավորվող համայնքային ծառայողի ատեստավորման հարցազրույցի փուլի ավարտից հետո անցկացված քվեարկության արդյունքներով ստացված ձայների հավասարության դեպքում ընդունված է համարվում «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» որոշումը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

21. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

բ) վարում է հանձնաժողովի նիստերը.

գ) կազմակերպում է թեստերի կազմման աշխատանքները՝ սահմանված կարգի համաձայն.

դ) մինչև թեստավորումն սկսելը հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում և ստորագրում է ամփոփաթերթերը, ինչպես նաև ստուգում և իր ստորագրությամբ վավերացրած թերթը փակցնում է քվեարկության համար նախատեսված արկղի վրա.

ե) հարցազրույցի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը.

զ) որոշում է ատեստավորման հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ.

է) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

22. Հանձնաժողովի անդամը՝

ա) ստորագրում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը.

բ) թեստավորման աշխատանքների նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

գ) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և կարող է հարցեր տալ ատեստավորվող համայնքային ծառայողներին.

դ) բարձրաձայն հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելու մասին, իսկ սխալ պատասխանի դեպքում տալիս է ճիշտ պատասխանը.

ե) մասնակցում է հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր համայնքային ծառայողի համար անցկացվող քվեարկությանը.

զ) ստորագրում է ատեստավորման թերթը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին գրառում է՝ «հատուկ կարծիքը կցվում է», հանձնաժողովի նախագահին է հանձնում իր կողմից ստորագրված հատուկ կարծիքը.

է) ծանոթանում է նիստերի արձանագրություններին և ստորագրում դրանք.

ը) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VI. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

23. Ատեստավորումը համարվում է ավարտված՝ հանձնաժողովի կողմից ատեստավորման արդյունքները հրապարակվելու պահից:

24. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 35

12 փետրվարի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԳԱԳԱՐԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9/1 ՀԱՍՑԵԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Եպրաքսի Սեդրակի Սուքիասյանը /ծնված 05/01/1933 թվական/ դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին՝ Անի համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17/06/1997 թվականի թիվ 6 որոշմամբ հատկացված բնակավայրերի տնամերձ հողամասի վրա գտնվող բնակելի տան, շենք շինությունների և փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ՝ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17. 06. 1997թվականի թիվ 6 որոշմամբ Եպրաքսի Սեդրակի Սուքիասյանին /ծնված 05/01/1933 թվական/, հատկացվել է 0,06 հեկտար մակերեսով տնամերձ հողամաս, որի վրա առկա են եղել բնակելի տուն և օժանդակ շինություններ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ բնակավայրի Գագարինի փողոց, թիվ 9/1 հասցեում գտնվող բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են 1960 թվականին՝ մինչև 2001 թվականի մայիսի 15-ը: Քաղաքացի՝ Եպրաքսի Սեդրակի Սուքիասյանը, փաստացի տիրապետում և օգտագործում է 0,06 հեկտար մակերեսով տնամերձ հողամասը նրա վրա գտնվող շենք-շինությունները և հողամասին կից 0,045803 հեկտար ավելի օգտագործվող սահմանազատված հողամաս, որոնք գործող օրենքի համաձայն, համարվում են այն ֆիզիկական անձանց սեփականությունը, ովքեր տիրապետում են այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Նկատի ունենալով, որ շենք-շինությունները և ավելի օգտագործվող հողամասը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ, համաձայն <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին,

2-րդ և 3-րդ հոդվածների դրույթների և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի դրույթներով՝ *որոշում եմ*

1. Ճանաչել քաղաքացի Եպրաքսի Սեդրակի Սուքիասյանի սեփականության իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Գագարինի փողոց, թիվ 9/1 հասցեի տնամերձ հողամասին կից 0,045803 հեկտար ավելի օգտագործվող սահմանազատված տնամերձ հողամասի և մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված, 285,21 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով շենք շինությունների նկատմամբ և համարել օրինական, որից 205,54 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տուն 73,03 քառակուսի մետր արտաքին մակերեսով գոմ և 6,64 քառակուսի մետր մակերեսով պարիսպ:
2. Եպրաքսի Սեդրակի Սուքիասյանի սեփականությունը համարվող տնամերձ հողամասին կից, ավելի օգտագործվող 300 քառակուսի մետր մակերեսով հողամասը տրամադրել անհատույց, իսկ 158,03 քառակուսի մետր մակերեսով հողամասը տրամադրել կադաստրային արժեքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 900495101132 հաշվեհամարին մեկ քառակուսի մետրի համար վճարել 528 /հինգ հարյուր քսանութ/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
4. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 12
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

ՈՐՈՇՈՒՄ N 36

12 փետրվարի 2020 թվական

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐՄԵՆԱԿԻ ԼԱԶԳԻՅԱՆԻՆ, ԱՐԱՏ ՌԱԶՄԻԿԻ ԼԱԶԳԻՅԱՆԻՆ, ՍԱՅԱԹ ԱՐԱՏԻ ԼԱԶԳԻՅԱՆԻՆ, ԼՅՈՒԴՄԻԼԱ ԱՐԱՏԻ ԼԱԶԳԻՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 109.96 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08. 02. 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրի 1-ին փողոց 17 հասցեի 08-098-009-004 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասը հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 30.05.1991 թվականի թիվ 3 որոշմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Սուսաննա, Արատ, Լյուդմիլա և Սայաթ Լազգիյաններին, որի վրա կառուցած են 109.96 քառակուսի մետր ներքին մակերեսով ինքնակամ շինություններ: Ինքնակամ շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
Քաղաքացի Արատ Լազգիյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով, 3-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով քաղաքացի Արատ Լազգիյանի դիմումը. *որոշում եմ*

1. Քաղաքացիներ Սուսաննա Արմենակի Լազգիյանին, Արատ Ռազմիկի Լազգիյանին, Սայաթ Արատի Լազգիյանին, Լյուդմիլա Արատի Լազգիյանին

սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրի 1-ին փողոց թիվ 17 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 109.96 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն ճանաչել օրինական:

2.Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 8-ի թիվ 2 որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սուսաննա Արմենակի Լազգիյանին, Արատ Ռազմիկի Լազգիյանին, Սայաթ Արատի Լազգիյանին, Լյուդմիլա Արատի Լազգիյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 12
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 37

12 փետրվարի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով *որոշում եմ՝*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Գործարանային փողոցի թիվ 1 հասցեում գտնվող Ասքանազ Վաղարշակի Մանուկյանին պատկանող բնակելի տունը վերահասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք Հրանտ Շահինյան փողոց, 2-րդ նրբանցք թիվ 2:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 12

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

ՈՐՈՇՈՒՄ N 38

12 փետրվարի 2020 թվական

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի բնակիչ Արտակ Անդրանիկի Շաբոյանի դիմումը՝ Գագիկ Հովհաննեսի Հակոբյանի հուղարկավորության ծախսը հոգալու համար, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 9 որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետը՝ *որոշում եմ*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2020 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4726 (հուղարկավորության նպաստներ բյուջեից) հոդվածից 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի բնակիչ Արտակ Անդրանիկի Շաբոյանին (անձնագրի N AN 0553468 տրված 022-ի կողմից) :

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 12
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 39

13 փետրվարի 2020 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ <<ԱՆԻ ՁՄԵՌ>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով *որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2020 թվականի փետրվարի 22-ին <<Անիի ձմեռ>> ավանդական մարզամշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գեղամ Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդամներ՝ Սամվել Սարոյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Վալերիկ Սահակյան–Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Մշակութային երիտասարդական կենտրոնի>> տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Գագիկ Սարոյան–<<Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության Մարալիկի մասնաճյուղի պատասխանատու

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար Անժելա Սաղաթելյանին՝

Միջոցառման կազմակերպման և նվերների ձեռքբերման համար հատկացնել 450000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ 2020 թվականի բյուջեի վարչական մասի 08.1.1.51 դասակարգման (հանգստի և սպորտի ծառայություններ) 426 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից:

2. Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 13
քաղաք Մարալիկ